| 2431 | 4 | 3 | 1 | 0,0     | 0,0 | 0,0     | 0,0     | 0,0    | 0,0     | 0,0    | 0,0    | 0,0   |     |     |     |     |     |     |     |     |
| 2432 | 4 | 3 | 2 | 21120,0 | 0,0 | 21120,0 | 21120,0 | 0,0    | 21120,0 | 0,0    | 0,0    | 0,0   |     |     |     |     |     |     |     |     |
|      |   |   |   |         |     |         |         |        |         |        |        |       |     |     |     |     |     |     |     |     |
|      |   |   |   |         |     |         |         |        |         |        |        |       |     |     |     |     |     |     |     |     |
|      |   |   |   |         |     |         |         |        |         |        |        |       |     |     |     |     |     |     |     |     |
| 2433 | 4 | 3 | 3 | 0,0     | 0,0 | 0,0     | 0,0     | 0,0    | 0,0     | 0,0    | 0,0    | 0,0   |     |     |     |     |     |     |     |     |
| 2434 | 4 | 3 | 4 | 0,0     | 0,0 | 0,0     | 0,0     | 0,0    | 0,0     | 0,0    | 0,0    | 0,0   |     |     |     |     |     |     |     |     |
|      |   |   |   |         |     |         |         |        |         |        |        |       |     |     |     |     |     |     |     |     |
| 2435 | 4 | 3 | 5 | 0,0     | 0,0 | 0,0     | 0,0     | 0,0    | 0,0     | 0,0    | 0,0    | 0,0   |     |     |     |     |     |     |     |     |
| 2436 | 4 | 3 | 6 | 0,0     | 0,0 | 0,0     | 0,0     | 0,0    | 0,0     | 0,0    | 0,0    | 0,0   |     |     |     |     |     |     |     |     |
| 2440 | 4 | 4 | 0 | 0,0     | 0,0 | 0,0     | 0,0     | 0,0    | 0,0     | 0,0    | 0,0    | 0,0   |     |     |     |     |     |     |     |     |
| 2441 | 4 | 4 | 1 | 0,0     | 0,0 | 0,0     | 0,0     | 0,0    | 0,0     | 0,0    | 0,0    | 0,0   |     |     |     |     |     |     |     |     |
| 2442 | 4 | 4 | 2 | 0,0     | 0,0 | 0,0     | 0,0     | 0,0    | 0,0     | 0,0    | 0,0    | 0,0   |     |     |     |     |     |     |     |     |
| 2443 | 4 | 4 | 3 | 0,0     | 0,0 | 0,0     | 0,0     | 0,0    | 0,0     | 0,0    | 0,0    | 0,0   |     |     |     |     |     |     |     |     |

|      |   |   |   |  |           |          |           |            |            |          |            |            |         |            |
|------|---|---|---|--|-----------|----------|-----------|------------|------------|----------|------------|------------|---------|------------|
| 2450 | 4 | 4 | 0 | Տրանսպորտ, որից՝   | 1829580,0 | 0,0      | 1829580,0 | 1894580,0  | 1894580,0  | 0,0      | 1894580,0  | 776566,5   | 0,0     | 776566,5   |
| 2451 | 4 | 5 | 1 | Հանապարհային տրանսպորտ   | 1829580,0 | 0,0      | 1829580,0 | 1894580,0  | 1894580,0  | 0,0      | 1894580,0  | 776566,5   | 0,0     | 776566,5   |
|      |   |   |   | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում (5113)   | 1756000,0 | 0,0      | 1756000,0 | 1816000,0  | 1816000,0  | 0,0      | 1816000,0  | 774876,5   | 0,0     | 774876,5   |
|      |   |   |   | - Վարչական սարքավորումներ (5122)   | 5000,0    | 0,0      | 5000,0    | 5000,0     | 5000,0     | 0,0      | 5000,0     | 0,0        | 0,0     | 0,0        |
|      |   |   |   | - Նախագծահետազոտական ծախսեր (5134)   | 68580,0   | 0,0      | 68580,0   | 73580,0    | 73580,0    | 0,0      | 73580,0    | 1690,0     | 0,0     | 1690,0     |
| 2452 | 4 | 5 | 2 | Զբոսային տրանսպորտ   | 0,0       | 0,0      | 0,0       | 0,0        | 0,0        | 0,0      | 0,0        | 0,0        | 0,0     | 0,0        |
| 2453 | 4 | 5 | 3 | Երկաթուղային տրանսպորտ   | 0,0       | 0,0      | 0,0       | 0,0        | 0,0        | 0,0      | 0,0        | 0,0        | 0,0     | 0,0        |
| 2454 | 4 | 5 | 4 | Օդային տրանսպորտ   | 0,0       | 0,0      | 0,0       | 0,0        | 0,0        | 0,0      | 0,0        | 0,0        | 0,0     | 0,0        |
| 2455 | 4 | 5 | 5 | Խողովակաշարային և այլ տրանսպորտ  | 0,0       | 0,0      | 0,0       | 0,0        | 0,0        | 0,0      | 0,0        | 0,0        | 0,0     | 0,0        |
| 2490 | 4 | 9 | 0 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող), որից՝   | -925681,1 | 0,0      | -925681,1 | -1280681,1 | -1280681,1 | 0,0      | -1280681,1 | -1222268,1 | 0,0     | -1222268,1 |
| 2491 | 4 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)  | -925681,1 | 0,0      | -925681,1 | -1280681,1 | -1280681,1 | 0,0      | -1280681,1 | -1222268,1 | 0,0     | -1222268,1 |
| 2500 | 5 | 0 | 0 | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅԻՐ<br>ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 2510 + տող 2520 + տող 2530 + տող 2540 + տող 2550 + տող 2560), այդ թվում՝ | 805390,7  | 663000,0 | 142390,7  | 1021947,9  | 828947,9   | 193000,0 | 686754,0   | 626932,4   | 59821,5 |            |
| 2510 | 5 | 1 | 0 | Աղբահանում, որից՝  | 651000,0  | 631000,0 | 20000,0   | 835000,0   | 801000,0   | 34000,0  | 627603,6   | 612779,6   | 14824,0 |            |
| 2511 | 5 | 1 | 1 | Աղբահանում   | 651000,0  | 631000,0 | 20000,0   | 835000,0   | 801000,0   | 34000,0  | 627603,6   | 612779,6   | 14824,0 |            |
|      |   |   |   | - Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ (4111)  | 0,0       | 0,0      | 0,0       | 0,0        | 0,0        | 0,0      | 0,0        | 0,0        | 0,0     |            |
|      |   |   |   | - Կումուլալ ծառայություններ (4213)   | 0,0       | 0,0      | 0,0       | 0,0        | 0,0        | 0,0      | 0,0        | 0,0        | 0,0     |            |
|      |   |   |   | - Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում (4252)   | 0,0       | 0,0      | 0,0       | 0,0        | 0,0        | 0,0      | 0,0        | 0,0        | 0,0     |            |
|      |   |   |   | - Տրանսպորտային նյութեր (4264)   | 0,0       | 0,0      | 0,0       | 0,0        | 0,0        | 0,0      | 0,0        | 0,0        | 0,0     |            |
|      |   |   |   | - Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին (4511)                                  | 631000,0  | 631000,0 | 0,0       | 801000,0   | 801000,0   | 0,0      | 612779,6   | 612779,6   | 0,0     |            |
|      |   |   |   | - Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ արևտրային կազմակերպություններին (4637)                          | 0,0       | 0,0      | 0,0       | 0,0        | 0,0        | 0,0      | 0,0        | 0,0        | 0,0     |            |
|      |   |   |   | - Տրանսպորտային սարքավորումներ (5121)  | 10000,0   | 0,0      | 10000,0   | 24000,0    | 24000,0    | 0,0      | 24000,0    | 14824,0    | 0,0     | 14824,0    |
|      |   |   |   | - Վարչական սարքավորումներ (5122)   | 10000,0   | 0,0      | 10000,0   | 10000,0    | 10000,0    | 0,0      | 10000,0    | 0,0        | 0,0     | 0,0        |
| 2520 | 5 | 2 | 0 | Կեղտաջերի հեռացում, որից՝  | 92390,7   | 0,0      | 92390,7   | 58000,0    | 58000,0    | 0,0      | 58000,0    | 41808,4    | 0,0     | 41808,4    |
| 2521 | 5 | 2 | 1 | Կեղտաջերի հեռացում   | 92390,7   | 0,0      | 92390,7   | 58000,0    | 58000,0    | 0,0      | 58000,0    | 41808,4    | 0,0     | 41808,4    |
|      |   |   |   | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում (5113)   | 92390,7   | 0,0      | 92390,7   | 55000,0    | 55000,0    | 0,0      | 55000,0    | 38808,4    | 0,0     | 38808,4    |
|      |   |   |   | - Վարչական սարքավորումներ (5122)   | 0,0       | 0,0      | 0,0       | 0,0        | 0,0        | 0,0      | 0,0        | 0,0        | 0,0     | 0,0        |
|      |   |   |   | - Նախագծահետազոտական ծախսեր (5134)   | 0,0       | 0,0      | 0,0       | 3000,0     | 3000,0     | 0,0      | 3000,0     | 3000,0     | 0,0     | 3000,0     |



|  |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
|--|---|---|---|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|---------|
| 2560   | 5 | 6 | 0 | 0        | 62000,0  | 32000,0  | 30000,0  | 128947,9 | 27947,9  | 101000,0 | 17341,9  | 14152,8  | 3189,1  |
| Երջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող), որից՝   |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
| 2561   | 5 | 6 | 1 | 1        | 62000,0  | 32000,0  | 30000,0  | 128947,9 | 27947,9  | 101000,0 | 17341,9  | 14152,8  | 3189,1  |
| Երջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)  |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
|  |   |   |   |          | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0     |
| - Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ (411)   |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
|  |   |   |   |          | 25000,0  | 25000,0  | 0,0      | 20947,9  | 20947,9  | 0,0      | 14152,8  | 14152,8  | 0,0     |
| - Կոմունալ ծառայություններ (4213)  |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
|  |   |   |   |          | 7000,0   | 7000,0   | 0,0      | 7000,0   | 7000,0   | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0     |
| - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ (4239)   |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
|  |   |   |   |          | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0     |
| - Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին (4511)  |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
|  |   |   |   |          | 10000,0  | 0,0      | 10000,0  | 10000,0  | 0,0      | 10000,0  | 0,0      | 0,0      | 0,0     |
| - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում (5113)   |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
|  |   |   |   |          | 20000,0  | 0,0      | 20000,0  | 71000,0  | 0,0      | 71000,0  | 3189,1   | 0,0      | 3189,1  |
| - Վարչական սարքավորումներ (5122)   |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
| ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող 2610 + տող 2620 + տող 2630 + տող 2640 + տող 2650 + տող 2660), այդ թվում՝ |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
| 2600   | 6 | 0 | 0 | 0        | 501148,0 | 220000,0 | 281148,0 | 501148,0 | 220000,0 | 281148,0 | 243442,9 | 153189,0 | 90253,9 |
| 2610   | 6 | 1 | 0 | 284628,0 | 180000,0 | 104628,0 | 284628,0 | 180000,0 | 180000,0 | 104628,0 | 141194,0 | 126123,0 | 15071,0 |
| 2611   | 6 | 1 | 1 | 284628,0 | 180000,0 | 104628,0 | 284628,0 | 180000,0 | 180000,0 | 104628,0 | 141194,0 | 126123,0 | 15071,0 |
| - Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին (4511)  |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
|  |   |   |   |          | 180000,0 | 180000,0 | 0,0      | 180000,0 | 180000,0 | 0,0      | 126123,0 | 126123,0 | 0,0     |
| - Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին (4637)  |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
|  |   |   |   |          | 83000,0  | 0,0      | 83000,0  | 83000,0  | 0,0      | 83000,0  | 3491,1   | 0,0      | 3491,1  |
| - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում (5113)   |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
|  |   |   |   |          | 20000,0  | 0,0      | 20000,0  | 20000,0  | 0,0      | 20000,0  | 11579,8  | 0,0      | 11579,8 |
| - Վարչական սարքավորումներ (5122)   |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
|  |   |   |   |          | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0     |
| - Այլ մեքենաներ և սարքավորումներ (5129)  |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
|  |   |   |   |          | 1628,0   | 0,0      | 1628,0   | 1628,0   | 0,0      | 1628,0   | 0,0      | 0,0      | 0,0     |
| - Լափազանիտագրատական ծախսեր (5134)   |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
| 2620   | 6 | 2 | 0 | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0     |
| - Համայնքային զարգացում, որից՝   |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
| 2621   | 6 | 2 | 1 | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0     |
| - Համայնքային զարգացում  |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
| 2630   | 6 | 3 | 0 | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0     |
| - Ջրամատակարարում, որից՝   |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
| 2631   | 6 | 3 | 1 | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0     |
| - Ջրամատակարարում  |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
| 2640   | 6 | 4 | 0 | 216520,0 | 40000,0  | 176520,0 | 216520,0 | 40000,0  | 40000,0  | 176520,0 | 102249,0 | 27066,0  | 75183,0 |
| - Փողոցների լուսավորում, որից՝   |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
| 2641   | 6 | 4 | 1 | 216520,0 | 40000,0  | 176520,0 | 216520,0 | 40000,0  | 40000,0  | 176520,0 | 102249,0 | 27066,0  | 75183,0 |
| - Փողոցների լուսավորում  |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
|  |   |   |   |          | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0     |
| - Գործարանական և բանվային ծառայությունների ծախսեր (4211)   |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |
|  |   |   |   |          | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0     |
| - Էներգետիկ ծառայություններ (4212)   |   |   |   |          |          |          |          |          |          |          |          |          |         |







|      |   |   |   |  |  |           |           |           |          |           |           |           |          |          |          |         |     |
|------|---|---|---|--|--|-----------|-----------|-----------|----------|-----------|-----------|-----------|----------|----------|----------|---------|-----|
|      |   |   |   |  |  | 8000,0    | 8000,0    | 8000,0    | 0,0      | 8000,0    | 8000,0    | 8000,0    | 0,0      | 3710,6   | 3710,6   | 0,0     | 0,0 |
|      |   |   |   |  |  | 0,0       | 0,0       | 0,0       | 0,0      | 0,0       | 0,0       | 0,0       | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0     | 0,0 |
| 2830 | 8 | 3 | 0 |  |  | 5000,0    | 5000,0    | 5000,0    | 0,0      | 5000,0    | 5000,0    | 5000,0    | 0,0      | 1761,5   | 1761,5   | 0,0     | 0,0 |
| 2831 | 8 | 3 | 1 |  |  | 3000,0    | 3000,0    | 3000,0    | 0,0      | 3000,0    | 3000,0    | 3000,0    | 0,0      | 1179,0   | 1179,0   | 0,0     | 0,0 |
| 2832 | 8 | 3 | 2 |  |  | 0,0       | 0,0       | 0,0       | 0,0      | 0,0       | 0,0       | 0,0       | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0     | 0,0 |
| 2833 | 8 | 3 | 3 |  |  | 2000,0    | 2000,0    | 2000,0    | 0,0      | 2000,0    | 2000,0    | 2000,0    | 0,0      | 582,4    | 582,4    | 0,0     | 0,0 |
| 2840 | 8 | 4 | 0 |  |  | 22000,0   | 22000,0   | 22000,0   | 0,0      | 21242,2   | 21242,2   | 21242,2   | 0,0      | 6994,5   | 6994,5   | 0,0     | 0,0 |
| 2841 | 8 | 4 | 1 |  |  | 0,0       | 0,0       | 0,0       | 0,0      | 0,0       | 0,0       | 0,0       | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0     | 0,0 |
| 2842 | 8 | 4 | 2 |  |  | 22000,0   | 22000,0   | 22000,0   | 0,0      | 21242,2   | 21242,2   | 21242,2   | 0,0      | 6994,5   | 6994,5   | 0,0     | 0,0 |
| 2900 | 9 | 0 | 0 |  |  | 1451000,0 | 1156000,0 | 1451000,0 | 295000,0 | 1451000,0 | 1156000,0 | 1451000,0 | 295000,0 | 825785,8 | 779264,9 | 46520,9 | 0,0 |
| 2910 | 9 | 1 | 0 |  |  | 1062000,0 | 767000,0  | 1062000,0 | 295000,0 | 1062000,0 | 767000,0  | 1062000,0 | 295000,0 | 560717,0 | 514196,1 | 46520,9 | 0,0 |
| 2911 | 9 | 1 | 1 |  |  | 1062000,0 | 767000,0  | 1062000,0 | 295000,0 | 1062000,0 | 767000,0  | 1062000,0 | 295000,0 | 560717,0 | 514196,1 | 46520,9 | 0,0 |
|      |   |   |   |  |  | 767000,0  | 767000,0  | 767000,0  | 0,0      | 767000,0  | 767000,0  | 767000,0  | 0,0      | 514196,1 | 514196,1 | 0,0     | 0,0 |
|      |   |   |   |  |  | 0,0       | 0,0       | 0,0       | 0,0      | 0,0       | 0,0       | 0,0       | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0     | 0,0 |
|      |   |   |   |  |  | 0,0       | 0,0       | 0,0       | 0,0      | 0,0       | 0,0       | 0,0       | 0,0      | 0,0      | 0,0      | 0,0     | 0,0 |
|      |   |   |   |  |  | 125000,0  | 0,0       | 125000,0  | 0,0      | 125000,0  | 0,0       | 120000,0  | 120000,0 | 44676,9  | 0,0      | 44676,9 | 0,0 |







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

12 հոկտեմբերի 2023 թվականի N 160-Ա

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԵՐՆ  
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԱՐՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Արովյան համայնքի ավագանին **ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝**

1. Արովյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 168 000 000 (հարյուր վաթսուներեք միլիոն) դրամ հաշվեկշռային արժեքով գույքերն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արովյանի համայնքային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -23

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՂԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱԼՍՅԱՆ ԳՈՌ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵԶՅԱՆ ԱՆԻ

ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱԿՈՔՅԱՆ ՆԱԻՐԻ



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՅՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՍԻՊՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ  Դ. ԶԱՐՈՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 12  
ք. Աբովյան

## ՑՈՒՑԱԿ

**«ԱՐՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ  
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ  
ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ**

(դրամ)

| Գույքային համար | Անվանում  | Համախառն հաշվեկշռային արժեք | Կուտակված մաշվածու թյուն | Հաշվեկշռային արժեք |
|-----------------|---|-----------------------------|--------------------------|--------------------|
| 1               | 2   | 3                           | 4                        | 5                  |
| 4100601         | KAMAZ 53605-48 (A5) բեռնատար ինքնաթափ, նույնականացման համար՝ XTC536055P1500441, տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր՝ N YJ451679 | 33 000 000                  | 0                        | 33 000 000         |
| 4100602         | KAMAZ 53605-48 (A5) բեռնատար ինքնաթափ, նույնականացման համար՝ XTC536055P1500442, տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր՝ N YJ451727 | 33 000 000                  | 0                        | 33 000 000         |
| 4100603         | KAMAZ KO-806 (G5), նույնականացման համար՝ (VIN) X5H806005P0000372, տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր՝ N 09YY474763             | 51 000 000                  | 0                        | 51 000 000         |
| 4100604         | KAMAZ KO-806 (G5), նույնականացման համար՝ (VIN) X5H806005P0000373, տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր՝ N 09YY474120             | 51 000 000                  | 0                        | 51 000 000         |
|                 |   | 168 000 000                 | 0                        | 168 000 000        |





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

12 հոկտեմբերի 2023 թվականի N 161-Ա

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԵՐԵՒԱՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ  
ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների Աբովյան համայնքի ավագանին **որոշում է**.

1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 203-Ա որոշմամբ հաստատված Աբովյան համայնքի «Երեխաների աջակցության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -23

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՂԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱԼՍՅԱՆ ԳՈՌ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵԶՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ  
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ  
ՀԱԿՈՔՅԱՆ ՆԱԻՐԻ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ  
ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ  
ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ  
ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ  
ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ  
ՅՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ  
ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ  
ՕՍԻՊՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ  Դ. ԶԱՐՈՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 12  
ք. Արովյան





Հավելված

Արցվյան համայնքի ավագանու

2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 161-Ա որոշման

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

«ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Աբովյան համայնքի «Երեխաների աջակցության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, սոցիալ-հոգեբանական, վերականգնողական, իրավական պաշտպանության, մանկավարժական աջակցության, դաստիարակչական ծրագրեր իրականացնող հաստատություն է (այսուհետ հաստատություն):

Հաստատության հիմնադիրն է Աբովյան համայնքը:

Աբովյան համայնքի «Երեխաների աջակցության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է «Աբովյանի երեխաների աջակցության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը (գրանցման համարը 11.210.02309, վկայականի համար 03Ա071278, գրանցված է 28.02.2006թ.), որն էլ համարվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն բյուջետային հիմնարկի (պետական գրանցման (հաշվառման) համարը՝ 11.0112, վկայական Բ004221) իրավահաջորդը:

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Հաստատության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, Զորավար Անդրանիկի փողոց 33:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է.

1) հայերեն լրիվ՝ Աբովյան համայնքի «Երեխաների աջակցության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ Աբովյան համայնքի «Երեխաների աջակցության կենտրոն» ՀՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ “Центр поддержки детей” общинная некоммерческая организация Абовянской общины.

4) ռուսերեն կրճատ՝ “Центр поддержки детей” ОНКО Абовянской общины.

5) անգլերեն լրիվ՝ “Children’s support center” of Abovyan community Non-Profit Communal Organization.

6) անգլերեն կրճատ՝ “Children’s support center” of Abovyan community NPCO.

6. Հաստատությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7. Հաստատությունն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են



հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:

8. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

9. Հաստատությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ: Հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչություններն ստեղծվում են հիմնադրի որոշմամբ, իսկ հիմնադրի կողմից ուղղակիորեն նախատեսված դեպքում՝ լիազորված մարմնի որոշմամբ:

10. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

11. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և (կամ) կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

## 2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

12. Հաստատության գործունեության նպատակը Արվյան համայնքի մինչև տասնութ տարեկան՝ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող (այսուհետ՝ ԿԴԻԳ) երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնողական, իրավական պաշտպանության, մանկավարժական աջակցության, դաստիարակչական, բարեգործական և այլ հանրօգուտ ծրագրերի (այսուհետ՝ Ծրագրեր) իրականացումն է:

13. Հաստատությունը բազմաֆունկցիոնալ սոցիալական ծառայությունների մատուցման կենտրոն է:

14. Հաստատության գործունեության առարկան է՝

1) նպաստել համայնքի՝ մինչև տասնութ տարեկան երեխաների առողջ զարգացմանը.

2) համագործակցելով երեխաների հիմնախնդիրների լուծման իրավասություն ունեցող պետական, համայնքային և այլ մարմինների, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների հետ՝ հայտնաբերել ԿԴԻԳ երեխաներին.

3) կատարել ԿԴԻԳ երեխաների և նրանց ընտանիքների անդամների սոցիալ-հոգեբանական վերականգնողական, անհատի հասարակությանը հարմարվելուն ուղղված աշխատանքներ.

4) իրականացնել ԿԴԻԳ երեխաների կարիքների գնահատում, մշակել յուրաքանչյուր երեխայի աջակցության աշխատանքների անհատական ծրագրեր.

5) նպաստել ԿԴԻԳ երեխաների աշխատանքային, մշակութային, սպորտային, գեղագիտական հմտությունների բացահայտման և ուսուցման կազմակերպմանը.

6) աջակցել կրթադաստիարակչական հաստատություններից դուրս մնացած երեխաներին կրթական հաստատություններում տեղավորելու աշխատանքներին.

7) աջակցել համայնքի ԿԴԻԳ երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված աշխատանքներին.

8) աջակցել առողջապահական, կրթական, մշակութային և այլ ոլորտների հաստատությունների ծառայություններից երեխաների օգտվելու հնարավորությունների մեծացմանը:

15. Հաստատությունն իր կանոնադրական խնդիրների արդյունավետ իրագործման նպատակով համագործակցում է ՀՀ պետական, համայնքային և ոչ պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների հետ, իր կողմից կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի հիման վրա իրականացնում է երկկողմանի ու

բազմակողմանի կապեր այդ կազմակերպությունների, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ:

16. Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթադաստիարակչական ծրագրերի իրականացում.

2) համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում.

3) ճամբարների կազմակերպում.

4) սպորտային միջոցառումների կազմակերպում.

5) ներկայացումների, համերգների, ցուցահանդեսների կազմակերպում.

6) մարզաձևերի, արվեստի տեսակների, զարդակիրառական արվեստի, արհեստների ուսուցման կազմակերպում.

7) ուսումնական և մեթոդական գրականության մշակում ու հրատարակում:

17. Հաստատության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է նրա կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

18. Հաստատությունը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:

### 3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

19. Հաստատության շահառուներ կարող են հանդիսանալ այն երեխաները, ովքեր՝

1) գտնվում են կյանքի դժվարին իրավիճակներում.

2) ունեն խնդիրներ օրենքի հետ.

3) ունեն վարքային խնդիրներ և դասվել են «դժվար դաստիարակվող երեխաների» շարքին (փողոցի երեխա, կրթությունից խուսափող երեխա, մուրացկանությամբ զբաղվող երեխա, տնից փախուստի դիմող երեխա և այլն).

4) հայտնվել են ոստիկանության ուշադրության ներքո.

5) կոնֆլիկտի մեջ են հասակակիցների (մեծահասակների) հետ.

6) իրենց հատուկ կարիքների, այդ թվում՝ հաշմանդամության պատճառով դուրս են մնացել կրթությունից և այլ սոցիալական ծառայություններից.

7) ցանկացած երեխա, ով ունի աջակցության որևէ կարիք:

### 4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

20. Հաստատությունն իրականացնում է սոցիալ-հոգեբանական, մանկավարժական, իրավական պաշտպանության աջակցության ծրագրեր:

21. Հաստատության աշխատանքները կազմակերպվում են ծրագրերի պահանջներին և ժամանակացույցերին համապատասխան:

22. Հաստատությունը մշակում է գործունեության ծրագրերը՝ հաշվի առնելով ԿԴԻԳ երեխաների կարիքները, հետաքրքրություններն ու հակումները, ընտանիքի և կրթական համակարգի պահանջները:

23. Հաստատությունում աշխատանքների կազմակերպումն իրականացվում է երեխաների կարիքների և հնարավորությունների հիման վրա կազմված բազմամասնագիտական ծրագրերով:



24. Հաստատությունը մատուցում է կանխարգելման, վաղ միջամտության և վերականգնողական ծառայություններ, որոնք ներառում են՝

1) սոցիալ-հոգեբանական աջակցություն անհատական, խմբային և ընտանեկան թերապիայի միջոցով.

2) կյանքի հմտությունների և սոցիալական կարողությունների (հնարավորությունների) ուսուցանում և զարգացում.

3) աջակցություն մասնագիտական կողմնորոշման և նախամասնագիտական կրթության հարցում.

4) հումանիտար և ֆինանսական աջակցության (ծայրահեղ իրավիճակների համար) տրամադրում.

5) բժշկական ծառայություն ստանալու մատչելիության ապահովում.

6) տեղեկատվության տրամադրում և ուղորդումներ.

7) երեխաների շահերի պաշտպանություն (աղվակացիա).

8) ԿԴԻԳ երեխաների խախտված (խաթարված) իրավունքների վերականգնում և պաշտպանություն.

## 5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

25. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած մարմինը՝ համայնքի ղեկավարը և գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

26. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

### 27. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

4) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

5) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

6) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

7) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը.

8) լուծարման հաշվեկշռի հաստատումը.

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

### 28. Համայնքի ղեկավարը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) վերահսկողություն է իրականացնում պետական կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները, տարեկան հաշվեկշիռը.

9) հիմնադրի հաստատմանն է ներկայացնում հաստատության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

10) հաստատում է հաստատության հոգաբարձուների խորհրդի կազմը.

11) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

29. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

### **30. Տնօրենը՝**

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը, կնքում գործարքներ.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները.

3) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

6) կատարում է աշխատանքի բաշխում հաստատության աշխատողների միջև.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) իրականացնում է մասնագիտական թիմի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

9) հաստատում է հաստատության աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.

10) ապահովում է աշխատանքային կարգապահական ներքին կանոնների, աշխատանքի անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը.



11) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

12) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

13) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և հաստատության կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

31. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

32. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով հաստատությանը և պետությանը պատճառած վնասի համար: Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

33. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր կարգադրության համաձայն, նրա լիազորություններն իրականացում է մասնագիտական թիմի ղեկավարը կամ այլ անձ:

34. Տնօրենին օրենքով սահմանված կարգով աշխատանքի նշանակում և ազատում է համայնքի ղեկավարը:

35. Մասնագիտական թիմի ղեկավարի գիտելիքներն ու հմտությունները՝

1) ունի բարձրագույն կրթություն և երեխաների հետ սոցիալական աշխատանքի ոլորտում առնվազն 2 տարվա ստաժ.

2) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը, երեխաների իրավունքների և սոցիալական պաշտպանության ոլորտը կարգավորող, ինչպես նաև՝ իր լիազորությունների հետ կապված օրենքների անհրաժեշտ իմացություն, ունի տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

3) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

### **36. Մասնագիտական թիմի ղեկավարի գործառույթներն են՝**

1) ծրագրերի նպատակներից բխող կազմակերպչական և մասնագիտական նշանակության խնդիրների բացահայտման և վերլուծության, աշխատանքի մեթոդաբանության և գնահատման գործիքների մշակման, ինչպես նաև որոշումներ ընդունելու գործառույթների իրականացումը.

2) ծրագրերի աշխատանքների ամենօրյա կառավարումը, համակարգումը, ուղղորդումը, վերահսկումը.

3) հաստատության մասնագիտական աշխատանքային թիմի նիստերի նախագահումը.

4) ելնելով աշխատանքային նկարագրերից (պարտականություններից)՝ մասնագիտական թիմի անդամներին համապատասխան ցուցումներ հանձնարարականներ տալը.

5) անհատական և ընտանեկան աջակցության կազմակերպման գործընթացում որակյալ ծառայություն մատուցելու նպատակով մասնագիտական թիմին աջակցելը.

6) ծրագրերի շահառուներին բացահայտելու և ծրագրերում ընդգրկելու նպատակով մասնագիտական թիմին աջակցելը: Անհրաժեշտության դեպքում՝ համագործակցելով պետական, համայնքային և ոչ պետական կառույցների հետ, ԿԴԻԳ երեխաների տեղավորման և ուղղորդման կազմակերպումը.

7) հաստատության շահառու անչափահասների անվտանգության ապահովումը, նրանց հետ իրականացվող մասնագիտական աշխատանքների (խնդիրների բացահայտում, վերլուծություն, գնահատում, անմիջական աջակցություն) ընթացքի վերահսկումը.

8) շահառուների ընդունելության, հաշվառման, փաստաթղթերի և էլեկտրոնային ձևերի



լրացման, տունայցերի կազմակերպման աշխատանքների համակարգումն ու վերահսկումը.

9) ծրագրերով նախատեսված միջոցառումների կազմակերպման և իրականացման համակարգումն ու վերահսկումը.

10) ծրագրերի ժամանակացույցով նախատեսված կարգով աշխատանքի արդյուքների վերլուծության և գնահատման իրականացումը, անհրաժեշտ հաշվետվությունների նախապատրաստումը.

11) ծրագրերի նպատակներին ռազմավարությանը համապատասխան՝ անհարժեշտ բանակցությունների վարումը.

12) ծրագրերի շահառուների դեպքերի վարման կառավարումը.

13) ծրագրերին առնչվող կամ շահագրգիռ՝ պետական, համայնքային և ոչ պետական տարբեր կառույցների հետ համագործակցության ապահովումը: Անհրաժեշտության դեպքում՝ ընդլայնված հանդիպումների, քննարկումների, կլոր սեղանների կազմակերպումը՝ նշված կառույցների պատասխանատուների, այլ մասնագետների, փորձագետների մասնակցությամբ.

14) մասնագիտական թիմի կողմից շահառուների անհատական փաթեթում ներառնվող և համակարգչային շտեմարանում պահպանվող փաստաթղթերի (անհատական պլան, գնահատման թերթիկ, մասնագիտական եզրակացություն, վիճակագրական տվյալներ և այլն) ժամանակին և ամբողջական լրացման, ամբողջական փաթեթի ստեղծման աշխատանքների վերահսկումը.

15) ուստիկանության մարմինների և այլ կառույցների հետ համատեղ իրականացվող գործունեության համակարգումն ու վերահսկումը.

16) մասնագիտական թիմի անդամների աշխատանքի գնահատումը, մասնագետների համար մեթոդական և հսկողական (սուպերվիզիոն) հանդիպումների պարբերաբար կազմակերպումը.

17) ծրագրերի ամենօրյա աշխատանքներում աշխատակիցներին աջակցելը.

18) ծրագրերի շահերից բխող այլ գործառույթների իրականացումը.

19) պարբերաբար հաշվետվություն է ներկայացնում տնօրենին կատարված աշխատանքների մասին:

37. Հաստատության հոգեբանի գիտելիքներն ու հմտությունները՝

1) ունի հոգեբանի բարձրագույն կրթություն.

2) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

**38. Հոգեբանի գործառույթներն են՝**

1) ուսումնասիրել ԿԴԻԳ երեխայի նրա ընտանիքի հոգեբանական և առանձնահատկությունները և խնդիրները, իրականացնել հոգեբանական վիճակի գնահատում.

2) ծանոթանալ երեխայի սոցիալական պատմությանը.

3) յուրաքանչյուր երեխայի համար կազմել նրա հետ աշխատանքի անհատական պլան.

4) կազմակերպել անհատական հոգեբանական աշխատանքներ ԿԴԻԳ երեխայի հետ.

5) կազմակերպել խմբային աշխատանքներ երեխաների համար (թերապևտիկ, ուսումնական, ռելաքսացիոն և այլն).

6) երեխայի վարքի վերաբերյալ մեկնաբանություններ տրամադրել մասնագիտական թիմին.

7) հոգեբանական թերապիայի և խորհրդատվության նպատակով հանդիպումներ անցկացնել երեխաների ծնողների հետ.

8) անհրաժեշտության դեպքում սոցիալական աշխատողի հետ մասնակցել տունայցի.



9) հոգեբանական ծառայությունների և ռեսուրսների վերաբերյալ մասնագիտական թիմին տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ.

10) մասնագիտական թիմի ղեկավարին երեխաների վերաբերյալ պարբերաբար տրամադրել նախնական, ընթացիկ, անհետաձգելի ամբողջական տեղեկություն.

11) յուրաքանչյուր ուսումնասիրված երեխայի վերաբերյալ ներկայացնել գրավոր մասնագիտական եզրակացություն, պահպանելով այն համակարգչային բազայում և օրինակը կցել երեխայի վերաբերյալ փաստաթղթերի փաթեթին.

12) կատարել գրառումներ երեխաների օրագրերում՝ տվյալ օրը երեխայի (նրա ընտանիքի) հետ իրականացված աշխատանքի վերաբերյալ.

13) տնօրենին և մասնագիտական թիմի ղեկավարին ներկայացնել պարբերական հաշվետվություններ.

14) կանոնավոր մասնակցել մասնագիտական վերապատրաստումներին, գիտապրակտիկ կոնֆերանսներին և ներկայացնել բարձր ռիսկի երեխաների հոգեբանական հիմնախնդիրները.

15) պարբերաբար վերլուծությունների ենթարկել հաստատության շահառուների հոգեբանական խնդիրները և դրանց միտումները, ներկայացնել առաջակություններ հետագա լուծումների վերաբերյալ.

16) գործել որպես թիմի անդամ՝ առաջնորդվելով հաստատության կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով, աջակցել թիմին ծրագրային խնդիրների լուծման հարցում.

17) իրականացնել այլ պարտականություններ, որոնք կրիսեն ծրագրերի շահերից:

39. Հաստատության սոցիալական աշխատողի գիտելիքներն ու հմտությունները՝

1) ունի սոցիալական աշխատողի որակավորում և երեխաների հետ սոցիալական աշխատանքի ոլորտում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ սոցիալական մանկավարժի բարձրագույն կրթություն, կամ բարձրագույն կրթություն և երեխաների հետ սոցիալական աշխատանքի ոլորտում առնվազն երկու տարվա ստաժ.

2) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

#### **40. Սոցիալական աշխատողի գործառույթներն են՝**

1) աշխատել ծրագրերում ներգրավված երեխաների և նրանց ընտանիքների հետ այն նպատակով, որպեսզի իրականացվի կարիքների (սոցիալական իրավիճակի) համալիր գնահատում և սահմանվի հիմնական խնդիրները, որոնց բխվել է երեխան.

2) դեպքի վերաբերյալ հավաքագրել համապատասխան տեղեկատվություն՝ հարցազրույցների, փաստաթղթերի, դիտարկումների միջոցով, ինչպես նաև իրականացնել հարցազրույց շրջապատի և այլ համակարգերի հետ և կազմել գնահատման թերթիկ.

3) զարգացնել անհատական ծրագրերի պլան (միջամտության պլան) յուրաքանչյուր երեխայի համար՝ ստորագրված և համաձայնեցված յուրաքանչյուր երեխայի ընտանիքի չափահաս անդամի հետ՝ խորհրդատվության ժամանակ.

4) իրականացնել անհատական սոցիալ-հոգեբանական վերահսկողական աշխատանքներ երեխաների և նրանց ընտանիքների հետ.

5) իրականացնել անհատական ծրագրերով նախատեսված գործողությունները, ձեռնարկելով միջամտության տարբեր մեթոդներ (խմբային աշխատանք, ընտանեկան աշխատանք, ընտանեկան ժողովներ), անհրաժեշտության դեպքում՝ վարել ինքնօգնության խմբեր.

6) իրականացնել մասնագիտական խորհրդատվություն՝ մասնագիտական կողմնորոշման, կրթական համակարգի և այն ամենի մասին, որը կարող է օգնել երեխային



հետագայում կրթություն ստանալ կամ աշխատել.

7) անհրաժեշտության դեպքում կազմակերպել տունայցեր, հանդիպումներ կրթական համակարգի ներկայացուցիչների՝ ուսուցիչների, ծնողների և դեպքի հետ առնչվող այլ մարդկանց ու ինստիտուտների հետ.

8) անհրաժեշտության դեպքում երեխայի կամ նրա ընտանիքի հետ աշխատելիս կատարել համապատասխան ձայնագրություններ, բոլոր տվյալները ներմուծել համակարգի՝ երեխայի համար նախատեսված հատուկ փաթեթում.

9) պլանավորված ժամանակահատվածում ամբողջականացնել բոլոր գրառումները, իրականացնել գնահատման պլանավորում և հաշվետվությունների կազմում.

10) համագործակցելով մասնագիտական թիմի հետ՝ կազմակերպել երեխայի և նրա ընտանիքի հետ թիմային աշխատանք.

11) կազմակերպել այցեր և հանդիպումներ երեխաների հետ աշխատող տարբեր կառույցների ներկայացուցիչների հետ.

12) տնօրենին և մասնագիտական թիմի ղեկավարին ներկայացնել պարբերական հաշվետվություններ.

41. Դեպքերի համատեղ վարման ժամանակ սոցիալական աշխատողի աշխատանքը մասնագիտական թիմի ղեկավարին կամ հոգեբանի կողմից պարբերաբար ենթարկվում է մասնագիտական հարցերի շուրջ հսկողության (սուպերվիզիայի):

42. Սոցիալական աշխատողը երեխաների հետ աշխատում է ծրագրերով նախատեսված ժամերին, սակայն, որպես կանոն, անհատական և ընտանեկան աշխատանքներն իրականացվում են դպրոցի պարապմունքներն ավարտվելուց հետո:

43. Տնտեսվարի գործառույթներն են՝

1) իրականացնում է հաստատության տնտեսական սպասարկման աշխատանքների ղեկավարումը.

2) ապահովում է տնտեսական գույքի պահպանությունը, դրանց վերականգնումը և համալրումը, ինչպես նաև շենքի (շինությունների) և դրան հարող տարածքի մաքրությունը.

3) հետևում է շենքի (շինությունների) վիճակին և միջոցներ է ձեռնարկում դրանց ժամանակին վերանորոգման համար.

4) աշխատողներին ապահովում է գրասենյակային պարագաներով և տնտեսական առօրյա ապրանքներով.

5) պատասխանատու է հակահրդեհային պաշտպանության ապահովման համար.

6) ղեկավարում է սպասարկող անձնակազմի աշխատանքը:

## 6. ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

44. Հաստատության գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև ծրագրերին աջակցելու և համայնքային, պետական և այլ մարմինների հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով հաստատությունում ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ հոգաբարձուների խորհուրդ:

45. Հոգաբարձուների խորհրդի կազմում կարող են ընդգրկվել հաստատության գործունեությամբ շահագրգիռ անձինք, կրթության, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ճանաչված ներկայացուցիչներ, ինչպես նաև ճանաչված գործատուներ, պետական իշխանության ներկայացուցիչներ:

46. Հոգաբարձուների խորհուրդը կազմվում է առնվազն հինգ հոգաբարձուից:



47. Տնօրենի ներկայացմամբ (առաջադրված թեկնածուների հետ համաձայնեցնելուց հետո) հոգաբարձուների խորհրդի կազմը հաստատում է համայնքի ղեկավարը:

48. Հոգաբարձուների խորհրդի նիստն իրավասու է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին:

49. Հոգաբարձուների խորհրդի որոշումները ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի նիստեր գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ: Հոգաբարձուների խորհրդի նիստերն արձանագրվում են:

50. Տնօրենը հոգաբարձուների խորհրդի նիստերին մասնակցում է առանց քվեարկելու իրավունքի:

#### **51. Հոգաբարձուների խորհուրդը՝**

1) օժանդակում է հաստատության համար ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, արտաբյուջետային ֆոնդի ձևավորմանը.

2) նպաստում է հաստատության կողմից իրականացվող լրացուցիչ, ինչպես նաև օրենքին և հաստատության կանոնադրությանը չհակասող այլ ծրագրերի իրականացմանը.

3) հաստատում է իր կողմից հաստատության արտաբյուջետային հաշվին մուտքագրված ֆինանսական միջոցների ծախսերի նախահաշիվը.

4) աջակցում է սոցիալական ծրագրերի իրականացմանն ու երեխաների ամառային հանգստի կազմակերպմանը.

5) լսում է իր հատկացրած միջոցների նպատակային ծախսման վերաբերյալ տնօրենի հաշվետվությունը.

6) մասնակցում է հաստատության գործունեության ծրագրերի քննարկմանը.

7) օժանդակում է համայնքային, պետական և այլ մարմինների հետ հաստատության համագործակցությանը, միջազգային կապերի ստեղծմանը:

52. Հոգաբարձուների խորհուրդը ձայների պարզ մեծամասնությամբ ընտրում է ավագ հոգաբարձու՝ մեկ տարի ժամկետով:

#### **53. Ավագ հոգաբարձուն՝**

1) կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի աշխատանքները, հրավիրում է խորհրդի նիստ և վարում այն.

2) հոգաբարձուների խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում իրականացնում է հոգաբարձուների խորհրդի կողմից իրեն տրված լիազորությունները:

54. Հոգաբարձուների խորհրդի տրամադրած ֆինանսական միջոցները մուտքագրվում են հաստատության արտաբյուջետային հաշվին և կարող են օգտագործվել հաստատության կողմից իրականացվող սոցիալական ծրագրերի ֆինանսավորմանը, ինչպես նաև աշխատողներին հավելավճարների տրամադրմանը: Այդ միջոցների օգտագործումը կառավարում է հաստատության տնօրենը՝ հոգաբարձուների խորհրդի հաստատած արտաբյուջետային միջոցների ծախսերի նախահաշվին համապատասխան: Խոշոր միանվագ մուծումների դեպքում՝ հոգաբարձուների խորհուրդը հաստատությանը կարող է առաջարկել նպատակային ծրագրեր:

## **7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

55. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքնով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք



բերված գույքից:

56. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

57. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

58. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

59. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում միայն դատական կարգով:

60. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

61. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականություններն են:

Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

62. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

63. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

64. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են.

1) հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

